ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1962 Общественные науки

Հ. Գ. Գրիգորյան

ԵՐԵՄՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՁԱՐԹՈՆՔԸ

1917 թվականի Հոկտեմբերյան ռևոլյուցիայով սկսվեց երկու հակադիր հասարակական սիստեմների՝ կապիտալիզմի և սոցիալիզմի պայքարի դարաշրջանը, սոցիալիստական ռևոլյուցիաների և ազգային ազատագրական ռևոլյուցիաների, իմպերիալիզմի խորտակման և դեպի կոմունիզմ ընթացող մարդկության հաղթարշավի մեծ դարաշրջանը։

Այն իր խորը կնիքը թողեց մարդկային մտքի և ստեղծագործության ամբողջ հետագա ընթացքի վրա։

Գրականությունն ու արվեստը ևս, ինչպես դաղափարախոսական ամեն մի արտահայտություն, ավելի խիստ սահմանագծմամբ կանգնում էին երկու հակադիր ճակատների վրա՝ հետադիմական ու առաջադիմական։ Մի կողմում այն արվեստագետներն էին, որոնք ձգտում էին շրջանցել շրջապատող կյանքը, չնկատել այն, և դրանով իսկ իրենց արվեստը ծառայեցնել հասարակական դիտակցության բթացման գործին։ Մյուս կողմում նրանք, ովքեր ձգտում էին իրենց արվեստը ծառայեցնել մարդկային կյանքի զարդացման, աշխարհի վերափոխման գործին։ Սփյուռքահայ գրականությունն էլ ունեցավ զարգացման նույն պրոցեսները։

Սփյուռքահայ գրական նոր սերնդի ներկայացուցիչներից էին «Մենք» հանդեսի շուրջը համախմբված գրողները՝ Շահան Շահնուր, Վազգեն Շուշանյան, Զավեն Որբունի, Բյուզանդ Թոփալյան, Արշամ Տատրյան, Նիկողոս Սարաֆյան և ուրիշները։ Թե՛ քաղաքական իրենց հայացքներով, թե՛ գրական կարողություններով, թե՛ ընդհանուր զարդացմամբ, տարբեր մակարդակի ու տարբեր խառնվածքների մարդիկ էին նրանք։ Սակայն տարբեր որակի ու խառնվածքի այդ մարդկանց ստեղծագործության մեջ կար ընդհանուր մի գիծ, որը և, գոնե սկզբնական շրջանում, նրանց միավորել էր հասարակական-գրական նույն ուղղության մեջ, դա՝ սեփական ճակատագրի և միևնույն հուզող հարցերի ընդհանրությունն էր, որ ընդգծվածորեն արտահայտվում էր նրանց առաջին գործերում։

Մի սերունդ էր այդ, որ սփյուռքահայ իրականության մեջ ստացավ «անապատի սերունդ» անունը։ Իր ճակատագրով և իր հիասթափություններով դա նույն պատերազմից վիրավորված և արևմտյան գրականության մեջ «կորած սերունդ» կոչված երիտասարդությունն էր, որի ընդհանուր հուսախաբությունը պատերազմից առավել խորանում էր իր ազգային ողբերգությամբ։ Դա այն երիտասարդությունն էր, որի մանկությունը թունավորված էր թուրքական ահավոր ջարդերով։ Շատերի պատանեկությունը անցել էր որբանոցային անուրախ մթնոլորտում, իսկ երիտասարդությունն՝ օտար երկնակամարների տակ, անհյուրընկալ ու հաճախ թշնամական միջավայրում։ Հայրենի երկրի կարոտը և իրենց շրջապատող օտար ու անհյուրընկալ միջավայրը ծնում էին նրանց մեջ

ծայրահեղ հուսահատություն և անկումի տրամադրություն, որն իր ուժեղ կնիքը պիտի դներ նրանց ստեղծած գրականության վրա։

Այդ սերնդի ամենատաղանդավոր ներկայացուցիչը հանդիսացավ Վազգեն Շուշանյանը։ Իր պատմվածքներում, վիպակներում, օրագրային խորհրդածություններում Վազգեն Շուշանյանը խոր հուզականությամբ պատմեց «անապատի» իր սերնդի դառը ճակատագիրը, նրա «մթին պատանությունն» ու կյանքի ողբերգությունը։

Վազգեն Շուշանյանի ամբողջ ստեղծագործությունը դառնացած հոգու մի ճիչ էր՝ հուսահատություն, ընդվզումի ու բողոքի կանչ։ Նրա հերոսների մեջ ուժեղ է ապրելու տենչը. պատրաստակամություն կա կռվելու, պայքարելու հանուն կյանքի, բայց նրանց անծանոթ են պայքարի ուղիները, նրանք չեն տեսնում պայքարողների մեծ բանակը, չեն կարող միանալ այդ բանակին։ Ուստի և միայնակության դառը զգացումը սպանում է նրանց մեջ ըմբոստության ոգին և նրանք հաճախ անձնատուր են լինում էժանագին սիրո հաճույքներին։ Սակայն դրա կողքին Վազգեն Շուշանյանը խստորեն դատապարտել է կապիտալիստական իրականությունը, նրա զզվելի բարքերը։ Նա ծանր ու դառը խոսքեր է ասել մտավորական այն խավի նկատմամբ, որը ծառայում է դրամատերերի դասին և «կը դյուրացնե իր մեղսակցությամբ» նրանց անազնիվ գործերը։

Մինչև 1932 թվականը Վազգեն Շուշանյանը ունեցավ խոտորումներ, հարեց ազգայնամոլ, ճղճիմ ու նեխված իրականությանը։ Սակայն ազատագրվելով երիտասարդական իր մոլորություններից, նա խստապես քննադատեց ու մերկացրեց դաշնակցականների արատավոր ու կործանիչ էությունը։ Հասկացավ, որ «արդարության ու նոր կյանքի խոստումը» «Վլադիմիր Իլյիչի ուղեղին մեջ է»։

Նա մեծ հպարտությամբ էր խոսում իր վերածնված հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մասին՝ «...որ իր ապագան կկերտե իր սեփական ուժերով։ Ամեն ինչ ճիգ է ու խոյանք ... ուր կյանքի իրական արժեքները պատվի են...»։

Դժբախտաբար նա չարժանացավ իր հայրենիքը տեսնելուն։ Կարճատև եղավ Վազգեն Շուշանյանի կյանքը։

1929 թ. Փարիզում համարյա միաժամանակ լույս տեսան Զավեն Որրունու «Փորձ» և Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպերը։

Զավեն Որրունու (Էոքսուզյան) վեպը նվիրված է հայրենի երկրից պոկված սփյուռքահայերի կյանքի նկարագրությանը։ Օտար միջավայրում մի կտոր հաց որոնելով է սկսվում հայ ընտանիքի քայքայումը, նրա բարոյական և հոգեկան անկումը։ Մերկացնելով կապիտալիստական իրականության գաղանային էությունը, նրա դասակարգային հակասություններն ու անտագոնիզմը, Զավեն Որրունին չի տեսնում, սակայն, այդ դրությունից դուրս գալու որևէ ելք. նա անօգնականորեն միայն արձանագրում է դրության ողբերգությունն ու աննկանելիությունը։ Սրա մեջ է Զ. Որրունու վեպի թուլությունը։ Վեպը կաղում է նաև իր կառուցվածքի և գեղարվեստական վարպետության տեսակետից։

Միանգամայն այլ էր Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպի հանգամանքը։ Արտահայտելով սփյուռքահայ այդ սերնդի անհուսության տրամադրությունները միաժամանակ դա խիստ պրոբլեմային մի երկ է՝ լայն ընդհանրացումներով ու արդիական։ Այն տագնապ է ձուլման և ապազգայնացման վտանգին ենթակա հայ երիտասարդության ճակատագրի վերաբերյալ։ Այդ երիտասարդությունը նահանջում է առանց երգի, առանց խնդության։ Նա հաստատ քայլերով դեպի անխուսափելի կործանում է ընթանում։ Վեպն ընդունվեց

որպես ահազանգ, որը գործի է կոչում՝ հանուն այդ երիտասարդության փրկության։

1933 թ. Շահան Շահնուրը հրատարակեց «Հարալեղներու դավաճանությունը» պատմվածքների ժողովածուն, ուր նա հանգում է այն մտքին, որ գաղթաշխարհի հայությունը կգտնի իր փրկության ճամփան, երբ ազատագրվի «դաշնակցության թույնից», և երբ բացվեն նրա առաջ Հայաստանի դռները։ Սա արդեն մի քայլ առաջ է «Նահանջ առանց երգի» գրքի հոռետեսության համեմատությամբ։ Դժբախտաբար, ծանր հիվանդությունը մշտապես մահճակալին է գամել տաղանդավոր գրողին, նա երկար տարիներ այլևս ոչինչ չստեղծեց։ Վերջին տարիներին Շահնուրը նորից հանդես է եկել, բայց արդեն որպես ֆրանսագիր հեղինակ՝ Արսեն Լյուբեն կեղծանունով։ Ֆրանսերեն լեզվով նա հրատարակել է բանաստեղծությունների երկու ժողովածու (1946 և 1951 թթ.) և արձակ էջերի մի ժողովածու (1956 թ.)։ Վերջին գործը արժանացել է ֆրանսագիր օտարազգի արձակագիրների Ռիվարոլի մրցանակին։

Անհրաժեշտ է այստեղ նշել նաև հետևյալ ուշագրավ հանգամանքը. XIX դարի երկրորդ կեսի և XX դարի ամբողջ առաջին քառորդի հայ հասարակայնությանը, ինչպես և գրական գործիչներից շատերին, հուզող կենտրոնական հարցը եղել է հայ ազգային-ազատագրական պայքարի, նրա մեջ մասնակցող ուժերի, այդ պայքարի տակտիկայի ու մեթոդների հարցը։ Գոյություն ունեցող վեճերում երկրորդական տեղ չէր զրավում, իհարկե, նաև դաշնակցության, նրա արկածախնդրական գործունեության ու կործանարար դերի գնահատականի հարցը։ Բնական է, այդ ամենը պիտի հուզեին նաև «Մենքի» շուրջը խմբված երիտասարդությանը։

Հայրենի երկրից վռնդված ու արտասահմանում ծվարած կովկասահայ դաշնակցական լիդերները իրենց հուշերում, հոդվածներում և հրապարակային ելույթներում կաշվից դուրս էին գալիս պատմության առաջ արդարացնելու կամ փառաբանելու իրենց նախորդ կործանարար գործունեությունը։ Մասնավորապես նրանք ամեն միջոց գործադրում էին հեղափոխական ռոմանտիկայի փառքի պսակով զարդարելու բացարձակապես արկածախնդրական ու իրենց արդյունքներով շատ ողբերգական հայդուկային ու կամավորական շարժումները։ Սակայն շատ հեռու լինելով կոմունիստական մտայնությունից, հաճախ (հատկապես սկզբնական շրջանում) թշնամական դիրք ունենալով դեպի այդ շարժումը, «Մենքի» առաջադեմ երիտասարդների մի մասը կարողացավ ճիշտ կողմնորոշում ունենալ դեպի դաշնակցությունը և խիստ քննադատական մոտեցում ցուցաբերել դեպի նրա անցյալն ու ներկան։

Իր «Պայնուզլները» պատմվածքում Շահան Շահնուրը գեղարվեստական մեծ վարպետությամբ ու համոզչականությամբ պոկում է «հեղափոխական ռոմանտիկայի ու հերոսականության» պսակը կամավորական շարժման «հերոսների»՝ «որդիք որոտմանների» վրայից, ցույց տալով, թե ինչպես երբեմն այդ շարժման մասնակիցները կատարել են հակաժողովրդական ու հակամարդկային, անասնական արարքներ։

Փաստորեն «Մենքի» երիտասարդների գրական այդ երկերը տուժած սերնդի ներկայացուցիչների ընդվզումի մի արտահայտությունն են ընդդեմ իրենց ապիկար ու դավաճան ղեկավարների և նրանց խարերայական ու դատարկ խոստումների։ Ղեկավարների ու տուժածների՝ երիտասարդ սերնդի միջև հասունացող կոնֆլիկտի մի արտահայտությունն էին այդ գործերը։

Սակայն այդ ըմբոստությունը, վերջին հաշվով պասսիվ, կրավորական բնույթի է, տիրապետողը այնտեղ ավելի զգացմունքներն են քան միտքը։ Գիտակցականը խորապես զիջում է զգայականի առջև։ Վազգեն Շուշանյանը պիտի դուրս գար դաշնակցության շարքերից, պիտի քննադատեր քաղաքական այդ արկածախնդիրներին, սակայն պիտի մնար միայնակ ըմբոստի դերում, առանց գտնելու այն ուժը, որը կարող էր հակադրվել սփյուռքահայ ազգայնամոլ շարժումին։ Այդ պատճառով էլ նրա պայքարը չէր կարող տալ ցանկալի արդյունքներ և նրան պիտի մղեր հուսահատության գիրկը։

«Մենքի» շարժումին անմիջապես չի մասնակցել, բայց նույն «անապատի սերունդի» գրականության տիպիկ ներկայացուցիչներից է նաև Հրաչ Զարդարյանը, որն իր ստեղծագործության մեջ կյանքը դիտում է մռայլ գույներով և ոչ մի լուսո կամ հույսի շող չի տեսնում այնտեղ։ Իր մտածողությամբ էլ նա շատ հեռու մնաց առաջադեմ մտայնությունից։ Սակայն ի պատիվ իրեն պետք է ասել, որ վերջին շրջանում նա կարողացավ հասկանալ ու ճիշտ գնահատել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի առաջատար դերը մարդկության ու հայ ժողովրդի ճակատագրի համար։ «Մարդուն պատմությունը, երկրակնդի վրա,— գրում է Հ. Զարդարյանը,— կը բաժանվի երկու ավագ գլուխներու,—

Մինչև հոկտեմբեր, 1917

Եվ 1917, Հոկտեմբերեն հետո...

Ու խղճի տեր որևէ հայ, ուր ալ ըլլա, մինչև սպառումը ժամանակներուն, հավետ անփոխարինելի երախտապարտությամբ միայն կրնա անդրադառնալ ռուս առաջադեմ հանճարի այս հաղթանակին, որուն կը պարտի իր կյանքը, կյանքը իր ժողովրդին, կյանքը իր մշակույթին, կյանքը հայ անունին ու նաև ... կարելիությունը իր պատմական առաքելության»։

* * *

1930 թ. հունիսին Միսաք Մանուշյանի և Ա. Սեմայի նախաձեռնությամբ Փարիզում կազմակերպվում է «Ֆրանսահայ նորագույն գրողների ընկերությունը», որը լույս է ընծայում «Ջանք» պարբերականը։ Այս սփյուռքահայ գրական զարթոնքի մի այլ արտահայտությունն էր։

«Ջանքի» երիտասարդությունը գաղափարական և գեղարվեստական իր հայացքներով հիմնովին տարբերվում էր «Մենքի» երիտասարդությունից։ Հուսահատությունն ու անուրախ իրականությունը չէր նետում այս երիտասարդությանը դեպի հոռետեսության գիրկը։

Երիտասարդների այդ խումբը գրականության մեջ կատարած իր առաջին քայլերից հարեց գրական այն առաջադեմ ուղղությանը, որի ներկայացուցիչները գիտակցում էին գրողի դերն ու դիրքը ժողովրդի կյանքում։

Ակտիվ վերաբերմունք դեպի կյանքը՝ ահա նրանց նշանաբանը։ Այդ ակտիվ վերաբերմունքն էլ մղում էր նրանց դեպի պայքար։ Հստակ էր դարձնում նրանց քաղաքական հայացքները։

Դեռ դարիս սկզբին, պրոլետարական հեղափոխության շարժման սկզբնավորման առաջին իսկ տարիներին հայ գրականության մեջ առաջացել էր այդ շարժման գաղափարաբանության ազդեցությամբ զարգացող հեղափոխական նոր գրական հոսանքը, որը գլխավորում էին բոլշևիկ հրապարակախոս-գրականագետներ Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը, բոլշևիկ-բանաստեղծ Հակոբ Հակոբյանը։

Բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի տրամադրություններն էին արտահայտում որոշ չափով նաև Շուշանիկ Կուրղինյանը, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը և ուրիշները։

Առաջադիմական գրականության այդ առողջ ավանդները նոր ուժով հնչեցին և նոր սոցիալիստական որակ ստացան Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի առաջին իսկ տարիներին։ Հակոբ Հակոբյանը, Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը հանդիսացան սոցիալիստական նոր գրականության առաջին հիմնադիրները հայ իրականության մեջ։ Այդ նոր գրականության առողջ ավանդներով զարգացավ ամբողջ սովետահայ գրականությունը։

Գրական այդ նոր ուղղության հետևությամբ էր իր առաջին գրական վհատ քայլերն սկսում «Ջանքի» գրական այս սերունդը։

«Ջանք» ամսագրի, Մ. Մանուշյանի և Ա. Սեմայի հիմնած «Նորագույն գրողներու ընկերության» առաջին քայլերը, ինչպես և իրենց այդ տարիների ստեղծագործությունը շատ երերուն էին, տարտամ, գրված էին զգալիորեն պակաս գրական վարպետությամբ։ Սակայն կարևորն ու էականը, հենց առաջին քայլերից, նրանց առողջ արմատներն էին, որ արդեն մոտակա տարիներին, նշանակալից զարգացում ստացան։

1935 թ. Միսաք Մանուշյանը հիմնում է իր խմբագրությամբ «Ջանգոս» բանվորական թերթը, իսկ Ա. Սեման՝ «Մշակույթ» գրական հանդեսը։ Դա Ֆրանսիայում դեմոկրատական ու բանվորական շարժման հզոր վերելքի տարիներին էր, երբ ժողովրդական ճակատը կարողացել էր միավորել երկրի բոլոր դեմոկրատական ու առաջադեմ ուժերը ընդդեմ հետադիմության ուժերի։

Իրենց գրական գործունեության առաջին իսկ քայլերից Մանուշյանն ու Սեման վստահ ու տիրաբար հաստատում են սփյուռքահայ ռևոլյուցիոն նոր պոեզիայի հիմքերը։ Միսաք Մանուշյանն իսկական ռևոլյուցիոն տրիբուն էր։ Որպես բոցաշունչ հրապարակախոս, իր կյանքի մեծ մասը նա նվիրաբերում է ռևոլյուցիոն գաղափարների պրոպագանդին։ Նա բանաստեղծություններ քիչ էր գրում, բայց այդ սակավաթվի մեջ էլ ուժգնորեն հնչում է ռևոլյուցիոն մարտիկի ձայնը, որ ժողովրդական մասսաներին զգոնության է կոչում։ Իր բանաստեղծություններում նա պայքարի է մղում ֆաշիստական խավարամոլության, կապիտալիստական շահագործման դեմ, վստահությամբ պրոպագանդում է կոմունիզմի պայծառ գաղափարները։ 1933 թ. Գ. Դիմիտրովին նվիրված իր բանաստեղծության մեջ նա գրում էր.

Երբ քեզի նման կան անզուգական մարտիկներ հզոր,
Պայքարն ընչազուրկ մեր դասակարգին՝ ընդդեմ կամակոր,
Հարստահարող ու միշտ գիշակեր կապիտալիզմին,
Անպայման կառնե կոմունիստական կյանքի լույս դափնին[1]։

Իր բանաստեղծություններում Մանուշյանը գովերգել է բանվորների ազնիվ ու համեստ աշխատանքը, գործազուրկների անլուր տառապանքներն ու բմբոստությունը, նրանց պայքարը հանուն սոցիալական արդարության։

Ուշագրավ է Միսաք Մանուշյանի վերաբերմունքը դեպի հայրենասիրության հավերժական մոտիվը։ Հայրենիքի կարոտը սփյուռքահայ գրողներից

[1] Միսաք Մանուշյան, Իմ երգը, Երևան, Հայպետհրատ, 1955, էջ 74։

շատերին հաճախ մղել է ազգայնամոլության և նեղ ազգայնականության։ Միսաք Մանուշյանը շատ ջերմ հայրենասեր էր, սակայն երբեք նրա մոտ այդ մոտիվը հիվանդագին բնույթ չի սացել։ Ընդհակառակը, գաղութահայ աշխատավորությանը նվիրված իր «Արթուն կեցեք» բանաստեղծության մեջ նա զգուշացնում է ազգայնամոլության թույնի վտանգից, բացատրելով, որ այդ թույնը «ի շահ իր ետին» սերմանողները աշխատավորության դասակարգային թշնամիներն են, որ ազգամիջյան «ցեղային» ատելություն սերմանելու ճանապարհով, ուզում են ջլատել բանվոր դասակարգի ինտերնացիոնալ համախմբվածության ուժերը։

Առաջադեմ, ռևոլյուցիոն մոտիվներ էր արտահայտում իր ստեղծագործության մեջ նաև Ա. Սեման, նա կոմունիստ չէր. իր ստեղծագործության շատ վաղ շրջանում արտահայտել է նաև որոշ հուսահատական տրամադրություններ։ Սակայն հետագայում նա մեկընդմիշտ ազատվեց ամեն տեսակի անկումայնությունից և պայծառ ապագայի ձգտումը դարձավ նրա միակ հավատո հանդանակը։

Կբարձրանա սրտես վեր ու կհպվի հոդիիս
Մանկութենես հուշ մը հին, բայց չի հուզեր հիմա զիս.
Քանզի նոր կյանքն է ձրգած արմատներն իր սիրտս խոր[2]։

1936 թ. նա հրատարակեց «Զրահավոր գարուն» խորագրով բանաստեղծությունների իր ժողովածուն, որտեղ գովերգում է ստրկացածների պայքարը հարստահարիչների դեմ, կոչ անում գրականությունը դարձնել լավագույն կյանքի համար մղվող պայքարի զենք՝ մերժելով արվեստն արվեստի համար տեսության ջատագովներին։

Նա շատ ջերմ սիրով կապված էր իր նոր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, դատապարտել է նրա բոլոր թշնամիներին, այդ թվում նաև դաշնակցականների ազգակործան գործունեությունը։

Ա. Սեման բոցաշունչ տողեր է նվիրել իսպանական ժողովրդի՝ իր ազատության համար ֆաշիզմի դեմ վարած հերոսական պայքարին։

Առհասարակ նրա ստեղծագործությունը նոր շրջանում ուղղված է եղեր սոցիալական անարդարության և բռնակալության դեմ։ Անդամ պատմական թեմային դիմելիս նա պատմությունը ծառայեցրել է ազատատենչ իր գաղափարների քարոզին, ինչպես «Շամիրամ» ողբերգության մեջ։

Մ. Մանուշյանի և Ա. Սեմայի խմբին հետագայում հարեց նաև Լասը (Լուիզա Ասլանյանը)։

Նրա պատմվածքները, ինչպես և 1936 թ. լույս տեսած «Հարցականի ուղիներով» վեպը խորասես տոգորված են հասարակական առաջադեմ գաղափարներով։ Նա կծու հումորով ծաղրում է և իրանահայ և ֆրանսահայ քաղքենիներին, ռուսական սպիտակ գվարդիականներին՝ ամեն տեսակի իշխանների ու կոմսերի, որ խղճուկ վտարանդու կյանք վարելով Փարիզի տականքների մեջ, խեղկատակ զառանցանքներով երազում են իրենց նախկին փառքի վերականգնման մասին։

Նա Սովետական Հայաստանի պայծառ իրականության մեջ է տեսնում սփյուռքահայ զանգվածների փրկության ուղին։ Լուիզա Ասլանյանի հերոսները

2 Ա. Սեմա, Զրահավոր գարուն, Փարիզ, 1936։

հանձին Սովետական Հայաստանի, տեսնում են իրենց վերածնված հայրենիքը, ուր և վերադառնում են, որպեսզի նոր կյանք սկսեն։

«Բացվել է արդեն նոր մի դար,— ասում է վեպի հերոսներից մեկը,— ու այդ նոր դարի ոսկի դռների առաջ կանգնել է նոր մարդը։ Նա ճեղքում է տառապը կյանքի... բռունցքը բարձրացրած դեմ դեմ։ Հոգիները նոր ափ են դուրս գալիս հիմա։ Նոր ափ է դուրս գալիս և մեր հոգին՝ հայի հոգին»[3]։

Բնորոշ է, որ սփյուռքահայ գրականության մեջ նոր ռևոլյուցիոն շունչ մտցնող այս երեք առաջամարտիկներն էլ շատ կարճատև կյանք ունեցան, որովհետև գրող լինելուց բացի նրանք մարդկության ազատության համար զենքը ձեռքներին պայքարող անձնվեր մարտիկներ էին և զոհվեցին ֆաշիզմի դեմ մղվող մեծ մարտերում։

Ա. Սեման զոհվեց 1940 թ. Հյուսիսային Ֆրանսիայում՝ Ֆլանդրիայի ռազմաճակատում, ընդամենը երեսուն տարեկան հասակում։

Լուիզա Ասլանյանը Ֆրանսիայի օկուպացման տարիներին Ֆրանսիայի լավագույն զավակների՝ կոմունիստների շարքում պայքարեց Ֆրանսիայի ազատագրման համար, եղավ Ֆրանսահայ դիմադրական շարժման ղեկավար գործիչներից մեկը։ Ակտիվ գործունեություն ծավալեց ընդհատակյա գրականության տպագրման և տարածման ուղղությամբ։

1944 թ. հուլիսին նա իր ամուսնու հետ միասին ձերբակալվեց, ուղարկվեց համակենտրոնացման ճամբար, ուր և սպանվեց։

Ֆրանսիայի ազատագրական պայքարի ամենաաչքի ընկնող ղեկավարներից ու հերոսներից էր Միսաք Մանուշյանը, որին ֆաշիստները 1944 թ. գնդակահարեցին իր 22 ընկերների հետ միասին։ Գնդակահարությունից առաջ Մանուշյանը իր կնոջը՝ Մելինե Մանուշյանին ուղղված նամակում գրում է. «Մի քանի ժամից հետո այլևս չեմ լինելու այս աշխարհում։ Շուտով, այս կեսօրից հետո՝ ժամը 15-ին կգնդակահարվենք ... Ես մտել էի Ազատության բանակի մեջ որպես կամավոր զինվոր և մեռնում եմ երկու մատ հեռու հաղթանակից և նպատակից։ Երջանկություն նրանց, ովքեր այիտի ապրեն մեզանից հետո և պիտի վայելեն վաղվան խաղաղության և ազատության քաղցրությունը»[4]։

Այդ շրջանի գրականության աչքի ընկնող ներկայացուցիչներից է նաև ամերիկահայ գրող Կարապետ Սիտալը, որի «Գիշերեն մինչև լուսաբաց» գիրքը լույս տեսավ 1931 թ.։

Գրքի խորագիրն ինքնին արդեն խորհրդանշում է նրա նոր որակը։ Կ. Սիտալը պատկանում է արևմտահայ գրողների ավագ սերնդին։ Գրական իր առաջին քայլերը նա սկսել է դեռևս 1911 թ։ Այն ժամանակ նա ավելի շատ զբաղվում էր ժողովրդական բանահյուսության նմուշների հավաքմամբ և մշակմամբ։ Սակայն, դրա հետ միաժամանակ, իր ինքնուրույն ստեղծագործության մեջ նա որոշ տուրք է տվել նաև ազգայնական տրամադրություններին։ Հետագայում իր ստեղծագործության այդ ամբողջ շրջանը Կ. Սիտալը կոչել է «իմ կյանքի գիշերը» և լիովին հրաժարվել նրանից։

Ստեղծագործական զարգացման նոր ճանապարհին Կ. Սիտալը իր ուժերն ամբողջությամբ տալիս է ռևոլյուցիոն պոեզիային, միջազգային պրոլետա-

---

3 Լաս (Լուիզա Ասլանյան), Հարցականի ուղիներով։

4 Մ. Մանուշյան, Իմ երգը, Երևան, Հայպետհրատ, 1955, էջ 27։

րիատի դասակարգային պայքարին, մերկացնում է իմպերիալիզմի հակաժողովրդական, ագրեսիվ բնույթը։

Կ. Սիտալը լի է Ամերիկայի դեմոկրատական ուժերի վերջնական հաղթանակի հավատով։ Նա գիտե, որ իմպերիալիստական գիշատիչները և պատերազմի հրձիգները, վերջիվերջո, կխորտակվեն, իսկ բանվորները, Ամերիկայի աշխատավոր ժողովուրդը վերջնականապես հաղթանակ կնվաճեն։

Երեսնական թվականների սկզբներին գրական ասպարեզ իջած և գրականության առաջադեմ ուղղությանը հարած նոր երիտասարդության մեջ ամենատաղանդավորը Վահե Վահյանն է։ 1933 թ. լույս տեսած «Արև անձրև» բանաստեղծությունների առաջին գիրքը, թեպետ և կրում է իր ուսուցչի՝ բանաստեղծ Վահան Թեքեյանի թախծոտ տրամադրությունների որոշ կնիքը, պարունակում է անձրևային, տխրամած տրամադրություններից արևին անցնելու առողջ ձայներ։

1946 թ. լույս տեսած նրա «Ոսկի կամուրջ» բանաստեղծությունների երկրորդ գիրքն արդեն վճռականապես հաստատում է բանաստեղծության մեջ նոր, դրական սկզբնավորության հաղթանակը. նա կոչ է անում ծառայել կյանքին, պայքարել հանուն վաղվա պայծառ օրվա։

Ինչ որ առի կյանքի հունեն՝ հիմա կյանքին կուտամ կրկին
Ես՝ համայնքին հետ բարախուն, այլ սոսկ հյուլեն անոր հետին[5]։

Իսկ այս համայնքի մեջ նա արդեն տեսնում է նոր կոփվածքի մարդկանց Ծնունդը, որոնք պիտի վերափոխեին կյանքը, «Նոր ձևով հերկեին հին հողը»։ Նոր պոեզիայի ստեղծման ճանապարհին Վահե Վահյանի առաջին քայլերը վեհերոտ են։ Սակայն հաջորդ տասնամյակում նրա ձայնը հնչում է իր ամբողջ ուժով։ Հետագայում նա կանգնում է սոցիալիստական ռեալիզմի առողջ դիրքերի վրա։

Գրական այդ նույն ուղղությանը հարեց նաև ամերիկահայ լրագրող-արձակագիր-բանաստեղծ Հակոբ Գույումճյանը։

Հակոբ Գույումճյանի բանաստեղծությունների կենտրոնական թեման իր Ժողովուրդն է, իսկ իր ստեղծագործական ոգեշնչման ակունքը իր սովետական հայրենիքը։ Դեռևս 1936 թ. իր «Փոթորիկ» ժողովածուում, «Երկիր իմ, խորհրդային» բանաստեղծության մեջ Գույումճյանը գրում էր.

Երջանիկ եմ ես,
Երկիր լուսերես,
Որ բախտը ունեմ
Քեզ միշտ սիրելու, քեզ միշտ զգալու
Ու փառքիդ մասին
Նորանուն, շքեղ
Երգեր գրելու, քեզմով մեծանալու...[6]

---

5 Վահե Վահյան, Ոսկի կամուրջ, Պեյրութ, 1946, էջ 8։
6 Հ. Գույումճյան, Փոթորիկ, 1936։

Հայրենիքի անհուն սերն ու կարոտը Գույումճյանը արտահայտել է իր բազմաթիվ բանաստեղծություններում։ Նա պատմում է, որ պանդխտության մեջ մուրացիկի պես է քաղում ամեն ծաղիկ ու կոկոն։

Փակված գտա ամեն դուռ երկինքներու տակ օտար,
Վախով, դողով քալեցի՝ աքսորական ու վտար[7]։

Մինչդեռ կապիտալիստական շահագործումից ու նեխվածությունից ազատագրված իր նոր, հպարտ սովետական հայրենիքում «դիաթոք ոսկե արևն» է փայլում, ու մարդն «այլևս ստրուկ չէ»։ Այդ նոր հայրենիքին է հավատարմությամբ իր երդումը տալիս բանաստեղծը։

Հակոբ Գույումճյանի արձակը ներդաշնակ է նրա բանաստեղծություններին և կարծես այնտեղ արտահայտված զգացմունքների շարունակությունն ու զարգացումն է։ Նրա արձակ առաջին ծավալուն գործը հանդիսացավ «Արյունոտ անապատը»։ Հեղինակն այն կոչել է «Վեպ իրական կյանքից». սակայն դա վեպ չէ իր առումով, այլ՝ մարդկային մեծագույն ողբերգության ականատեսի խիստ հուզիչ հուշագրություններ։

«Արյունոտ անապատը» ինքնակենսագրական բնույթ է կրում։ Համարյա արձանագրային ճշտությամբ նա պատմում է իր ընտանիքի կյանքի ու կենցաղի մասին։ Գույումճյանը իրական գույներով, միամիտ մանկան շուրթերով պատմում է չլսված տանջանքներից բթացած, հոգեվարքի մեջ գտնվող, ոչնչացվող մի ամբողջ ժողովրդի արյունոտ ճանապարհի մասին։ Եվ այդ հուզված պատումը դառնում է ցնցող փաստաթուղթ՝ մի ամբողջ ժողովրդի մարտիրոսացման մասին։

Սակայն անցնում են նաև աքսորի ու գաղթականության, փորձությունների և արյունոտ անապատներում դեգերելու տարիները։ Պատանի Գույումճյանը հաղթահարելով Էլիս-Այլանդ կղզու բոլոր խոչընդոտները ընկնում է, վերջապես, «Ավետյաց երկիր»՝ հռչակված Ամերիկան։ Նրա արձակի երկրորդ ծավալուն գործը «Ահա քեզի Ամերիկան» գիրքը, նույնպես ինքնակենսագրական բնույթի է։ Նրանում Ամերիկան ներկայացված է հենց այնպես, ինչպես այն տեսել է դժվարին տանջանքների բովով անցած պատանին։ Թվում է, թե գովաբանված արևմտյան քաղաքակրթության աշխարհը պետք է ցնցեր, հափշտակեր, կլաներ անփորձ պատանուն։ Սակայն այդպես չի ստացվել։ Պատանի Գույումճյանը չի շլանում ամերիկյան կյանքի արտաքին փայլով, ռեկլամ-գովազդների լույսերով։ Այդ կյանքի լավ երևույթների կողքին նա կարողանում է տեսնել նաև ծիծաղելին ու այլանդակը։ Եվ իր մեղքը չէ, եթե այդ վերջինը ավելի շատ է։

Հեղինակը նկարագրում է ամերիկյան իրականության այլանդակությունները՝ բանվոր դասակարգի շահագործումը, ոստիկանական ռեժիմը, հակակոմունիստական պրոպագանդայի կեղծիքը, ռասսայական խտրության հակամարդկային երևույթները, բարոյական անկումը և դրան հակադրում սովետական Ռուսաստանը։

Սուր, սպանիչ սատիրայով է խոսում հեղինակը դաշնակցականների մասին, որոնք ստորաբար վրպարտում են Սովետական երկիրը։ Նա միաժամանակ ցույց է տալիս նաև, որ սփյուռքահայությունը նողկանքով երես է դարձնում

---

[7] Հ. Գ ո ւ յ ո ւ մ ճ յ ա ն, Ճեղքված սիրտ, Ֆիլատելֆիա, 1947, էջ 22։

դաշնակցականներից, արժանի հակահարված տալով նրանց, և ավելի ու ավելի է կապվում իր ծաղկող հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ։

Հակոբ Գույումճյանը կարողանում է դիտել կյանքը, ճիշտ ընդհանրացումներ և հետևություններ անել, հաղորդակից դարձնել նրանց իր ընթերցողներին։ Սակայն, ինչպես իր շափածո գործերում, նույնպես և արձակի մեջ, նա չի կարողանում հասնել կատարողական արվեստի բարձր վարպետության, սա նրա ստեղծագործության թույլ կողմն է։

Ա. Սեմայի հրատարակած «Մշակույթ» առաջադիմական պարբերականին աշխատակցում էին նաև Պետրոս Զորյանը, Սեմայի քույրը՝ բանաստեղծուհի Մարի Աթմաճյանը և ուրիշները։

Միսաք Մանուշյանը, Ա. Սեման, Լասը (Լուիզա Ասլանյանը), Կարապետ Սիտալը սփյուռքահայ հետեղեռնի գրական դարթոնքի այն առաջին ներկայացուցիչներն էին, որ գրական նոր ռեալիստական ուղղության հիմքերն էին դնում։ Նրանք սփյուռքահայ իրականության մեջ գաղափարական արվեստի, առաջադեմ գաղափարական գրականության, բարոյական և դաստիարակչական բարձր նպատակներ հետապնդող գրականության ստեղծման առաջին ռահվիրաները հանդիսացան։

Այդ ուղղության ներկայացուցիչները հասել էին քաղաքական մտածողության այնպիսի մի մակարդակի, որը հնարավորություն էր տալիս նրանց այսօրվա կյանքը դիտել գալիքի բարձունքներից և իրենց ամբողջ գործունեությունն ու ստեղծագործությունը ծառայեցնել ապագան մոտեցնելու գործին։ Նրանց ստեղծած գրականությունը թևավորված էր գալիքի պայծառ տեսիլքով։

Այդ ուղղության ներկայացուցիչների երկրորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ նրանք չէին ամփոփվում ազգային սահմանափակության նեղ շրջանակներում, այլ դառնում էին համամարդկային գաղափարների և իդեալների արտահայտիչներ։

Իրենց համար ուղենիշ ու դրոշակ դարձնելով իրենց հայրենիքում ստեղծվող սովետահայ գրականությունը, նրա օրինակով նրանք իրենց ստեղծագործությունը հագեցնում էին խորը գաղափարայնությամբ, այն ուղղում էին կապիտալիստական իրավակարգի և սոցիալական անհավասարության դեմ։ Այդ գրականությունը դեռ սոցիալիստական գրականություն չէր, սակայն նա իր մեջ, անշուշտ, արդեն կրում էր սոցիալիստական գրականության առանձին սաղմերը։ Իր առողջ հիմունքներով այդ ուղղությունը զարգացման լայն հեռանկարներ ուներ և այն բուռն ծաղկման հասավ հաջորդ տասնամյակներում։ Եվ հենց այդ տեսակետից է, որ նրանց ստեղծած գրականությունը պատմական խոշոր արժեք է ներկայացնում։

Նրանցից շատերի գործերն իրենց գեղարվեստական արժանիքներով երբեմն չեն հասնում ձևի կատարելության, բայց նրանք կմտնեն գրականության պատմության մեջ, որպես գրական նոր ուղղության ստեղծման շրջանի առաջին հուզիչ գրական վավերագրեր։

Դրա մեջն է հենց նրանց ուժն ու արժեքը։

Գրական այդ ուղղությունը հետագայում 40—50-ական թվականներին կյանքի պիտի կոչեր շնորհալի գրողների մի փայլուն սերունդ՝ Գեղամ Սևան, Գառնիկ Աղդարյան, Արմեն Դարյան, Վահագն Սարգսյան, Սմբատ Տերունյան, Վահրամ Հաճյան, Նշան Շահեն և շատ ուրիշներ, որոնք իրենց ստեղծագործու-

թյան միակ մեթոդը պետք է դարձնեին սոցիալիստական ռեալիզմը, իրենց ստեղծագործությունները հագեցնելով կոմունիստական խորը գաղափարայնությամբ։

* * *

Երեսնական թվականներին սփյուռքահայ գրականության մեջ գործում էր գրողների մի այլ խումբ ևս, որի մեջ մտնողների մի մասը նոր գրական անուններ են. Բենիամին Նուրիկյան, Վահե Հայկ, Անդրանիկ Անգրեասյան, մյուսներից հին գրական սերնդի վերապրած ներկայացուցիչները՝ Զարուհի Գալեմքերյան, Լևոն Մեսրոպ, Զարեհ Պլպուլ, Նազարեթ Մանկունի, Հակոբ Մնձունի և ուրիշներ։ Գրական կյանքի ընդհանուր աշխուժացման հետ նրանք ևս ստեղծագործական ակտիվացման որոշ նշաններ են ցուցաբերում։ Գրողների այս խումբը չի տարվում գրական նոր մոդեռն ուղղություններով ու մտայնությամբ, հեռու է նաև գրական ռևոլյուցիոն սոցիալիստական ուղղությունից ու գաղափարներից։ Հավատարիմ քննադատական ռեալիզմի ավանդներին, նրանք իրենց գրվածքներում օբյեկտիվորեն վերարտադրում են կյանքի իրական պատկերները, հակասությունները, կենցաղային դրվագները։ Սակայն արժեքավորն ու գնահատելին նրանց ստեղծագործության մեջ քննադատական պաթոսն է այդ կյանքի նկատմամբ և իրենց համակրանքն ու սերը ժողովրդի հասարակ ներկայացուցիչների հանդեպ։

Զգալի տեղ է բռնում նրանց ստեղծագործություններում հին հայկական գյուղն իր նահապետական կենցաղով ու բարքերով, և հայ աշխատավոր գյուղացու չարքաշ, տաժանակիր կյանքը։

Գրական այդ խմբի աչքի ընկնող ներկայացուցիչներից է Բենիամին Նուրիկյանը, որի պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Այգեկուտք» խորագրով, լույս տեսավ 1937 թ.։ Փոքրիկ, գողտրիկ պատկերներով, մեծ ջերմությամբ ու հուզականությամբ հեղինակը տալիս է սփյուռքահայ պարզ, հասարակ մարդկանց, բանվորների ու գեղջուկների կյանքը, նրանց դառնությունն ու խինդը։ Բենիամին Նուրիկյանը խոր համակրանք ու սեր է տածում դեպի իր հերոսները, դեպի հասարակ, աշխատավոր ժողովուրդը։ Շատ գրավիչ է նրա ոճի պարզությունը, դիտողականությունը։ Բենիամին Նուրիկյանը փորձում է շարունակել արևմտահայ մանրավեպի փայլուն վարպետների լավագույն ավանդները։

Այդ ժամանակաշրջանում գրական ասպարեզ իջավ նաև սփյուռքահայ արդի արձակի լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ Վահե Հայկը՝ իր «Հայրենի ծխան» պատմվածքների ժողովածուի առաջին հատորով։ Հետագա տարիներին նա այդ նույն խորագրի տակ հրատարակեց պատմվածքների ևս երեք հատոր։ Շատ լավ ծանոթ լինելով սփյուռքահայերի կյանքին, նա կարող վրձինով պատկերում է այդ կյանքն իր բարդ ու բազմատեսակ երանգներով, և, ինչպես հատուկ է ճշմարտացի արվեստին, նա իր ընդհանրացումների մեջ դուրս է գալիս ամերիկահայ փոքր գաղութի նեղ սահմաններից և դիմակալերծ անում ժամանակակից կապիտալիստական աշխարհի ողջ սուտն ու կեղծ բարեպաշտությունը, այդ նեխած հասարակության դատապարտվածությունը։

Վահե Հայկի փոքրիկ պատմվածքներում ճշմարտացիորեն արտացոլված է ժամանակակից դրամատիրական հասարակության ստորին և վերին խավերի կենցաղն իր բոլոր հասարակական-տնտեսական հարաբերություններով, թեպետ հեղինակն այդ մասին չի խոսում ուղղակիորեն։ Իրրև ուշադիր դիտող-ար-

վեստագետ՝ նա պատկերում է կյանքն այնպես, ինչպես որ այն կա, թողնելով որ ընթերցողն ինքն անի իր հետևությունները։ Նույնիսկ այն դեպքերում, երբ Վահե Հայկը ակամա պետք է եղրակացություն հանի, նա այդ անում է այլաբանական ձևով, երբեմն շատ նուրբ, հաղիվ նկատելի հումորով։ Հենց դա է, որ նրա պատմվածքները դարձնում է առանձնապես համոզիչ ու ճշմարտացի։ Նա գրում է դոլլարի ուժի տակ կքած մարդկանց մասին, հասարակության ծախու բարոյականության մասին, ծախված կամ դժբախտ սիրո մասին, փոքր մարդկանց մեծ վշտի մասին։

Սփյուռքահայ դրականության ավագ սերնդի ներկայացուցիչներից Լևոն Մեսրոպն այդ տարիներին ակտիվ դրական գործունեություն է ծավալում։ Բավական երկար ժամանակ Լևոն Մեսրոպը եղել է դաշնակցության շարքերում, սակայն հետագայում հիասթափված խղել է իր կապերը այդ կուսակցության հետ և հանդես եկել նրա ակտիվ մերկացնողի դերում։

Իր «Զարե», «Հաշիշին» վեպերում, «Քերբելայի դիշերները» հեքիաթ-պատմվածքում տվել է ֆեոդալական Արևելքի բարքերի ու կենցաղի գեղեցիկ, իրական պատկերները։ «Կախարդող լեռը և ներգաղթող ձին» վեպը մի փորձ է՝ անցնելու իր համար նոր՝ հայրենադարձության և ներգաղթի թեմային։ Լևոն Մեսրոպը Սովետական Հայաստանի ջերմ բարեկամներից է։

Զարուհի Գալեմքերյանը, Հակոբ Մնձունին, Նազարեթ Մանկունին, Զարեհ Պլպուլը, Թորոս Ադամյանը, Լուիֆի Մինասը, Վահրամ Տատրյանը, Սարգիս Սահակյանը իրենց բազմաթիվ գործերում տվել են հայկական գյուղական կենցաղի բազմաթիվ գեղեցիկ նկարագրություններ, պատկերներ, խորհրդածություններ։

Նրանց հույսերի աշխարհը հիմնականում մտորումներն են ժողովրդի ծանր ճակատագրի, աշխատավոր մարդկանց չարքաշ կյանքի և տիրող սոցիալական անարդարության մասին։

Այդ խմբի ներկայացուցիչներից Նազարեթ Մանկունին երկար տարիներ աշխատել է Ամերիկայում որպես գործարանային բանվոր, մոտիկից ճանաչել և մտերմացել է ոչ միայն հայ, այլև օտարազգի աշխատավորների ու մտավորականների հետ։ Այդ ամենը, հատկապես տարբեր ազգությունների աշխատավորների եղբայրական միասնության թեման, նա դարձրել է իր պատմվածքների նյութը։ Իր հերոսների մասին նա գրում է. «Անոնք ես փնտրած, գտած և իմ անպաճույճ լեզվով նկարած եմ։ Իմ փոքր հասակես մինչև 72 տարիքս ես անոնցմե՛ն բնավ չրաժանեցա և ոչ ալ անոնք ինձմե՛։ Եվ այս ընկերակցությունը սրտիս ամենամեծ հրճվանքն է պատճառած»։ Ն. Մանկունին պատկերում է հետպատերազմյան տագնապալից կյանքը, տնտեսական ճգնաժամը, նրա ծանր հետևանքները աշխատավոր մարդկության համար և վերջիններիս անքակտելի բարեկամությունն ու միասնությունը։

«Թոմասսո» պատմվածքում նա նկարագրում է Ամերիկայի 1929 թ. տնտեսական մեծ ճգնաժամի տարիներին իտալացի երաժշտագետ Թոմասսո Մարթինիի մի կտոր հացի համար մղած տանջալից պայքարը։ Ալեոր արվեստագետը տնտեսական տագնապի հետևանքով կորցնում է իր բարեկեցիկ դրությունը, և որպեսզի սովամահ չլինի՝ հարկադրված է փողոցներում պաղպաղակ վաճառել։ Հեղինակը մերկացնում է ամերիկյան դեմոկրատիայի «արդարությունն» ու «հավասարությունը»։

Նույն այդ ճգնաժամի ծանր հետևանքների նկարագրմանն է նվիրված «Մա-

լաթիացի Մինաս» պատմվածքը։ Տնտեսական այդ ահավոր ճգնաժամի հետևանքով միլիոնավոր ընտանիքներ քայքայվեցին և հարկադրված եղան իրենց տներն ու կալվածները հանձնել վաշխառուներից վերցրած պարտքի ու տոկոսների փոխարեն։ Տնտեսական այդ տագնապը հաղարավոր աշխատավորների մղեց ինքնասպանության։ Մալաթիացի Մինասը նույնպես ծանր օրեր ապրեց ճգնաժամի հետևանքով։ Սակայն հայ գյուղացուն հատուկ համառությամբ նա դիմադրեց դժվարություններին, մինչև որ Մայր Հայրենիքը ներդաղթի կոչ ուղղեց իր պանդուխտ որդիներին։ Մալաթիացի Մինասը ներդաղթում է՝ լսելով «Հայրենի աշխարհի արտին, ջրին, թուփին, և աճյունացած պապերու ոգեկոչող շունչն ու առինքնող կանչը, որ կուզար հողի ընդերքեն»։

Շատ հետաքրքիր դեմք է երևանական թվականներին գրական ասպարեզ իջած Անդրանիկ Անդրեասյանը։

Անդրեասյանի մեջ միանում են մանրավիպագիրը և լրագրողը։ Շնորհալի հրապարակախոսը գրքից-գիրք աճում է նաև իբրև արձակագիր։ Հմուտ և փորձված լրագրողն իր գրական երկերում շարունակում է հրապարակախոսական պայքարը՝ թունոտ ծաղրի ենթարկելով շրջապատող միջավայրի արատավոր ու թշնամական քաղաքական գաղափարները և ուղղությունները։

Ա. Անդրեասյանը ևս իր սերնդի մտավորականներից շատերի նման տեսել է կոտորածի ու փախուստի բոլոր սարսափները, ճաշակել է որբի՝ զրկանքներով լի, հյուծող կյանքը։ Իր պատմվածքներում նա հաճախ է դիմում այդ օրերի հիշողություններին, սակայն ոչ թե այդ սարսափների սոսկ արձանագրման, այլ իր հիշողություններն այսօրվա քաղաքական պայքարի նպատակներին ծառայեցնելու համար։

Անդրանիկ Անդրեասյանի պատմվածքներում մեծ տեղ է հատկացված ռասայականության դարշելի քաղաքականության մերկացմանը։ Հեղինակը տոգորված է ժողովուրդների բարեկամության պայծառ գաղափարներով։ «Արցունքի կաթիլներ» պատմվածքում Ա. Անդրեասյանը պատմում է ամերիկյան բանակի շարքային զինվոր Ֆիլիպ Ջեկսոնի մասին, որը մեծացել է Ալաբամա նահանգում և իր մոր կաթի հետ նա ներծծել է նաև ռասայական բոլոր նախապաշարումները։ Նրա հոգեկան աշխարհը սահմանափակված է եղել ֆուտբոլային ու բեյզբոլային մրցումների և Հոլիվուդի կինո-աստղերի նկատմամբ ունեցած հետաքրքրությամբ։ Բայց ահա նա ընկնում է բանակ, որտեղ ծանոթանում է տարբեր նահանգներից եկած, տարբեր մաշկ ունեցող, բայց միատեսակ անձնազոհությամբ իրենց հայրենիքը պաշտպանող մարդկանց հետ։ Բանակի այդ շրջապատում անցկացրած մի քանի ամիսները արմատական փոփոխություններ են առաջացնում նրա հայացքների և պատկերացումների մեջ։ Արձակուրդով տուն վերադառնալով՝ նա լսում է հրեաներին և նեգրերին ոչնչացնելու անհրաժեշտության մասին քեռու ճառերը, և, ի մեծ զարմանս իր հարազատների, հակահարված է տալիս իր քեռուն։ Հաջորդ օրը նա եկեղեցում տեսնում է, թե ինչպես ռազմաճակատում վիրավորված և բազմաթիվ շքանշաններով պարգևատրված սերժանտը մնում է ոտքի վրա կանգնած, որովհետև սևերին հատկացված բոլոր տեղերը զբաղված են, իսկ սպիտակներին հատկացված աթոռներին,— որոնք դեռևս զբաղված չեն,— նա չի համարձակվի նստել. այդ մասին նրան նախազգուշացնում է պատին փակցված հայտարարությունը։ Ֆիլիպ Ջեկոնսը ցուցադրաբար տեղից ելնում է և ողջ ժամերգության ընթացքում կանգնած մնում։ Նրա օրինակին են հետևում նրա երեք զինվոր ընկերները։

Նրանք բոլորը եկեղեցուց դուրս գալիս՝ զինվորական ողջույն են տալիս նեգր սերժանտին, թեև աստիճանով նա նրանց ստորադրյալն էր։

Իր թեմայով այդ պատմվածքին է ձայնակցում Անդրանիկ Անդրեասյանի «Վարձատրություն» պատմվածքը, որի հերոսը՝ Ֆիլիպինցի սպա Ռոդրիգոն Մանիլայի մարտերում արտակարգ անձնվիրություն և հերոսություն է ցուցաբերում։ Նա կորցնում է ոտքը, բայց, ի հատուցումն այդ բանի, շքանշանների հետ մեկտեղ նա ստանում է ևս մի պարգև՝ ուղեգիր — ճանապարհորդելու իր ըմբոնմամբ, դեմոկրատիայի և կուլտուրայի ավետյաց երկիրը՝ Ամերիկան։ Սակայն Ամերիկայում գտնվելու առաջին իսկ օրը նա հանդիպում է ծանր ու դառն հիասթափության։ Գնացքում փոքրիկ ամերիկուհին մանկական անմիջականությամբ իր արհամարհանքն է արտահայտում նրան այն պատճառով, որ նա սպիտակ չէ, որովհետև նա հորից լսել է, թե Ֆիլիպինցիները կեղտոտ, վատ մարդիկ են։ Ռոդրիգոն քաղցած է, բայց նրան ներս չեն թողնում վագոն-ռեստորան, որտեղ գերի հիալերականներին ամենայն սիրալիրությամբ սեղաններ են տրամադրել։ Հիասթափված և ընկճված Ռոդրիգոն ընդհատում է անհյուրընկալ Ամերիկայով կատարվող իր ճանապարհորդությունը ու վերադառնում իր հարազատ Լուզան կղզին։

Մռայլ պատկերներով մերկացնելով ամերիկյան կենցաղի և բարքերի ողջ հյուծախտը, Անդրանիկ Անդրեասյանը դիմակազերծում է ամերիկյան կեղծավոր «մարդասիրությունը», դատապարտում ցեղապաշտությունը և փառաբանված «ամերիկյան դրախտը»։ Մեծ ջերմությամբ են գրված նրա պատմվածքները արհամարհված սևամորթների մասին կամ ամերիկացի առաջադեմ գիտակից այն տարրերի մասին, որոնք հասել են ինտերնացիոնալ միասնության անհրաժեշտության բարձր գիտակցությանը։

Անդրանիկ Անդրեասյանի գրվածքների խոշոր մասը նվիրված է մեծ եղեռնի արհավիրքներից փրկված հայ մանուկներին, գաղութահայերի հայրենադարձության թեմային։ Ինչպես և Վահե Հայկը, նա մտահոգված է և ահազանգում է սփյուռքահայության լուծման օրավուր աճող վտանգի դեմ պայքարելու մտահոգությամբ։

Այսպիսով Անդրանիկ Անդրեասյանի և ուրիշների գործերի օրինակով մենք տեսնում ենք, որ քսաներորդ դարի քաղաքական-հասարակական մեծ իրադարձությունները իրենց որոշակի կնիքը պիտի դնեին նաև գրական այն հին ուղղության վրա, որ ծանոթ է քննադատական ռեալիզմ անունով։ Այդ ուղղության ներկայացուցիչները ևս պատմական նոր ուղիներում ձեռք են բերում ավելի ակտիվ քաղաքական մտածողություն։ Նրանց ստեղծագործությունները օբյեկտիվ իրականության պասսիվ հայելցողական սառը վերարտադրումից դառնում են ավելի ակտիվ, միտումնավոր, շեշտվածորեն ու ցցուն ի հայտ են բերում հեղինակի քաղաքական համակրանքները։

Նույն երեսնական թվականներին սփյուռքահայ իրականության մեջ ստեղծվել էր նաև հետադիմական ուղղության մի գրականություն, որն իր բավական ուժեղ արտահայտությունն ունեցավ հատկապես երկու պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում։ Ներկայումս այդ գրականությունը խոշոր չափով կորցրել է իր ազդեցությունը, սակայն նրա ներկայացուցիչները դեռ կան, գործում են։

Այդ գրականության ներկայացուցիչների համար բնորոշը գրականությունը կոնկրետ սոցիալական դերից զրկելը, ռեալ իրականությունից կտրելը, իռա-

ցիոնալի՝ բանականության համար անըմբռնելի, ենթակայականի աշխարհը տանելը, այն միստիկականության, երազականության մշուշով պարուրելը։ «Ստեղծագործական ազատություն» կեղծ նշանարանի տակ գրականությանն ու արվեստին նրանք հաղորդում են բուրժուական-անարխիստական, անհատապաշտական ոգի, աշխատում ջրկել գրականությունը ամեն տեսակի դաղափարականությունից և բովանդակությունից։ Նրանք գռեհկացնում, կոպտացնում են անգամ մարդկային ամենամաքուր զգացումը՝ սերը, պատճառաբանելով, որ «Սերը կորսնցուցած է իր ռոմանթիզմը և դարձած շոշափելի», իբր թե ժամանակակից քաղաքի կյանքի պայմաններում վերացել են այդ ռոմանտիզմի բոլոր անհրաժեշտ նախադրյալները՝ «Կը պակսի սոխակը։ Կը պակսի նաև Լուսինը՝ նույնիսկ լիալուսին գիշերով՝ էլեկտրական լույսերով բազմագույն և բազմաձև հոսանքներուն առջև»[8]։ Եվ քանի որ սերը դառել է շոշափելի, ապա կեցցե մեղկ էրոտիկան, սեկսուալ և անասնական բնազդները։ Նրանք տեսնում են իհարկե տիրող սոցիալական անարդարությունն ու հակասությունները, սակայն ոչ միայն չեն մերկացնում ժամանակակից դրամատիրության մռայլ ու դժնի իրականությունը, այլ ընդհակառակը կեղծում են օբյեկտիվ ճշմարտությունը, վարդագույն երանգներ տալիս նրան։ Եվ քանի որ սեր սպիտակի տեղ ներկայացնելը այնքան էլ հեշտ չէ, ապա աշխատում են ներկայացնել ամեն ինչ այնպես, որ իբր շարիքը մարդկային հասարակայնության մեջ այնքան համընդհանուր բնույթ է ստացել, որ զուր է նրա առանձին արտահայտությունների դեմ պայքարելը, պետք է հաշտվել այդ ամենի հետ և չտեսնել, երես դարձնել շարիքից։ Պետք չէ վրդովվել, պետք չէ ընդվզել, պետք չէ առհասարակ բանականությանը դիմել։ Նրանք անիծում են կյանքը, ներկայացնելով այն որպես համատարած մղձավանջ և իրական աշխարհին հակադրում արստրակցիան՝ վերացականությունը։

Բուրժուական անկումային մտայնության և գրականության բոլոր ձևերը, վերջին հաշվով հանգում են իրականության կեղծմանը։ Այդ ուղղության ներկայացուցիչները վերջնականապես կորցրել են հավատը դեպի մարդը, դեպի ամեն տեսակ դրական արժեքները, դեպի բանականությունը, դեպի լավ ապագան։

* * *

Եթե փորձենք հանրագումարի բերել սփյուռքահայ գրականության մեջ այդ շրջանում կատարված սկզբունքային լուրջ ու խոշոր տեղաշարժերը, ապա վստահորեն կարող ենք արձանագրել, որ սփյուռքահայ գրականության երկու բանակների միջև կատարվել է վճռական ու կարևոր սահմանագծում։ Դաշնակցական հետադեմ բանակը, շարունակելով իրեն հատուկ շաղատանությունն ու անամոթ ստախոսությունը, հետզհետե ավելի է մխրճվում մտավոր ու բարոյական նեխման ու քայքայման տիղմի մեջ։ Այդ գրականությունը չի տվել ոչ մի նոր անուն, ոչ մի քիչ թե շատ աչքի ընկնող գործ։ Մինչդեռ սփյուռքահայ առաջադեմ գրականությունն ամրապնդվում է օրեցօր՝ դեպի իրեն քաշելով նորանոր առողջ ու կենսախինդ ուժեր, տասնյակ նոր անուններ։

Առաջադեմ գրողների ճակատը նույնպես այսօր արդեն իր արտահայտման երկու ընդգծված տարբեր թևերն ունի՝ քննադատական ռեալիզմի ուղղության գրողներ և նոր, զարգացող սոցիալիստական ռեալիզմի գրողներ։

---

8 «Անդաստան գրականության և արվեստի», Փարիզ. Մ. Հ. 2. էջ 14—15։

ԵՐԵՎԱՆ
ՊՈՒՇԿԻՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Սոցիալիստական ռեալիզմի ուղղությունը թեպետ ամենաերիտասարդն է սփյուռքահայ իրականության մեջ, սակայն անվիճելի կերպով այսօր սփյուռքահայ գրականության ամենազարգացող ու լայն հեռանկարներ ունեցող թևն է ներկայացնում։ Այդ գրականությունը մեծ չափով աճել է ոչ միայն քանակապես, այլ գլխավորապես իր ներքին պոտենցիալով (ներուժայնությամբ)։ Այդ գրականության հասարակական ներուժությունը բնորոշվում է հեղինակներին հուզող խնդիրների մասշտաբականությամբ, նշանակությամբ։ Համարյա բոլոր սփյուռքահայ գաղութներում արդեն կան ու գործում են նոր մտածողության և առաջադիմական հայացքների գրողներ, որոնք ստեղծում են խորը մարդկային մի գրականություն՝ հագեցած սուր սոցիալական պաթոսով, գեղարվեստական նոր արտահայտման ձգտմամբ, գալիքի հավատով։

Գրողների այս սերունդը արդեն պատկերում է արդիականության նոր հերոսին՝ նոր մարդուն, որն ունի ուժեղ կամք և նպատակասլացություն՝ տիրող անարդարության վերացման նկատմամբ, ունի ակտիվ վերաբերմունք դեպի կյանքը։ Նոր հերոսը կոփված է սուր հասարակական-քաղաքական ընդհարումների բովում և իր բնավորության ու մտածողության մեջ մարմնավորում է սոցիալիստական գծեր։ Նա մտահոգված է իր ժամանակակիցների ճակատագրով։ Ունի հստակ տեսակետ աշխատանքի ու նրա վերափոխման նկատմամբ։ Տեսակետ, որ հնարավորություն է տալիս թափանցել երևույթների խորքը, տեսնել այն լայն հեռանկարներով։ Նոր հերոսը զեկավարվում է գաղափարական հստակ ու գիտական՝ կոմունիստական չափանիշներով, այդ պատճառով էլ կարողանում է ճիշտ հասկանալ ժամանակակից հասարակական բոլոր երևույթները։

Սփյուռքահայ սոցիալիստական ռեալիզմի ուղղության գրականությունը արդեն խոշոր հետք է թողել սփյուռքահայ իրականության մեջ։ Իր գոյության փաստով նա տալիս է ստեղծագործական այդ նոր մեթոդի կենսունակության մի նոր ու լավագույն ապացույց։

Սփյուռքահայ գրականության ներկա սերունդը հանդես է գալիս արդեն ոչ միայն արևմտահայ գրականության լավագույն ավանդների պահպանողի, այլև այն շարունակողի և հարստացնողի դերում։

Սփյուռքահայ առաջադեմ գրողներն այսօր կատարում են մեծ ու շնորհակալ մի գործ, որի համար ժողովուրդը երախտապարտ է նրանց։ Մեծ զոհողությունների գնով այսօր նրանք ստեղծում են սփյուռքահայ նոր առաջադիմական գրականությունը։ Եվ այդ փաստով արդեն նրանք կմտնեն գրականության պատմության մեջ, որպես մի նոր ու պայծառ շենքի առաջին աղյուսները դնողներ։